

մի թէ ամէն բանի երեւոյթէն կրնանք
զպէս ենթադրել:

պատճառը հասկանալ, եւ երբ ինքզինքն վերահասու կ'ըլլայ որ իր շուրջը կը դառնայ, իսկոյն մեռելաթիւնը վրիժը կը ցատկէ եւ կը պահանջէ իր զգեստներուն դիրքը զորս մեռելաթիւնը պատուած էր իրը պատանքը եւն: Գործածելու համար Սակից ալ կը ծագի նոր կատարելութիւն մը: Մեռելաթիւնը տեսնելով որ իր գործը համարուած էր ողջ մարդու մը հետ է եւ ոչ թէ մեռելի մը, ինքն ալ իր կարգին կը պահանջէ իր լուսարդէները եւ եկեղեցիի փոխադրման ծախքերը՝ առանց հաշուելու նաեւ իր առնելիքը . . . Նըւէրը Այս անգամը ներկայիս բաւական զրոյցուցած ըլլալով մէջերին հանգստեան թիւն մը կը կատարեն եւ երկուքն ալ կը գոհացնեն:

ԱԶԳԱՅԻՆ

ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐԻԹԻՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՏԱՏԵԱՆ ԱՐԹԻՆ ՓԱՅԱՅԻ

Իր ապացոյց այն ընդհանուր յարգանքին ու համարման զոր հանգուցեալ Տատեան Յարութիւն փայլաւ կը վայելէր երկրին մէջ, ամէն ազգէ, ամէն աստիճանէ ու պաշտօնէ բազմաթիւ ակնաւոր անձնաւորութիւններ այս առուով, ժամը նախաշրջանէ ելն ինքնալի: Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր տեղի ունեցաւ հանգուցեալ փայլային յուզարկութեամբ տխուր հանգեալ:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Կառավարական պաշտօնական մարմինները ներկայ էին, Սէյիմ Մէլիսէ փաշա, Համիդ պէյ զատէ Մանուտ պէյ, հաճի Արթի պէյ զատէ Շէրիֆ պէյ, Հիւսէյն փաշա: Կայս. Պալատին բոլորներէն հաղորդակցուող պէյ, շօնի էֆ. Իսկէնտէր, Սէֆէտէր էֆէնտի, Ալէքսանդր պէյ Գարաթեօօօրի, Պոնիօլիք փաշա, Չիլպա պէյ զատէ Միւնիք պէյ, Սասնէթտին պէյ, Իրիս փաշա, ներկայացուցիչներ Հասան Ֆէյիսի փաշայի եւ Սայիտ պէյի կողմէ:

Իսպանական մարմիններ, Ռուսական, Գերմանական, Ռուման, Աւստրիական, Անգլիական, Պեճիական, Իտալական, Հոլանդական, Սլաւոնական եւ պարսկական դեսպանատանց Ա. Ստրասնիքը, Յունաստանի դեսպանն ու Ս. Թարաշաշը, պուլկարական գործակալաւորը, պարսկական դեսպանատանէն Տոքթ. Լափ-ճինճեան, ինչպէս նաեւ Պ. Պ. Ռուէ Գարաթեօօրի Սամանիք, Պիւքիք, Օթթո, Չէր-պաշէֆ եւ Սթիլիքս:

Յունաց Պատրիարքարանին կողմէ ներկայ էր փոխանորդ Սրբազանը, ընկերակցութեամբ մարապոլիսի մը:

Պուլկարաց Էկզարքարանին կողմէ ներկայ էր փոխանորդը:

Հայ-կաթոլիկներու պատրիարքարանին կողմէ ներկայ էին Արիւսեան եւ Մէր-ճանճեան վարդապետները, ինչպէս նաեւ գործակալաւոր Շէրեան էֆէնտի, Ազարեան էֆէնտի, եւ Գարաթեօօրի Յովհաննէս էֆէնտի:

Հրէից խախտապետն ալ ներկայացուցիչ մը զրկած էր:

Աղբ. պաշտօնական մարմիններէ ներկայ էին,

Եկեղեցական դասէն Պատրիարքական Փոխանորդը, Երուսաղէմի Պատր. Փոխանորդը, Կոնս. Ժողովոյ երկու ատենակալներ Սրբազանները, ինչպէս նաեւ Հմայեակ եւ Միտրոպ. Եպիսկոպոսները: Տ. Հմայեակ Սրբազան իր սպակիր դասը կեցած էր:

Եկեղեցական դասէն ներկայ էին նաեւ Արարիկեան, Եղեկեան, Յակոբեան վանան, Դանիէլեան, Աճէմեան, Բարդէն, Վահրէմ, Տաճատ, Գարաթաշեան, Գալպէճեան, Տիրաք եւ Գալաթեան վարդապետները: Նաեւ Պոլսի յոյսի եկեղեցիներէն երկուքական յոսանալ:

Աշխարհական դասէն ներկայ էին՝

Պատրիարքարանի Ա. գործակալաւորը, քաղաքական ժողովոյ անդամներէն Գարաթեօօրի Նորատեմեան, Խորեան, Իրիս Սալիմ, Զարեհ Տիլպի, Գրիգոր Գալաթեօօրեան, Միլիտի Ասատեան, Տիրաքեան եւ Երեւանի էֆէնտի, ներկայացուցիչներ Ռուսական, Տիւսեան եւ Դաւթատեան խորհուրդներէն, Պատրիարքարանի պաշտօնէութիւնը, Հիւսէյնիպի ճոզարքաճութեան ատենապետ Պատրիկ էֆ. եւ անդամներ, ինչպէս նաեւ տեղաւոր Գրիգոր Սէյիմիճեան, Մաքսուտ Հարէնց, Բարաթեմեան Տիլք-

ան, Մանուկեան Տիլքան, Ալլահիլլաթի Յովհաննէս եւ իր զաւակը, Գառնիկ Յովհաննէս, Գրիգոր Կիւմիւշկէտեան, Կարապետ Բապուճեան, Կարապետ Մէֆէրեան, Լեւոն պէյ Ներսիսեան, Անտոն պէյ Քէօշէ օղլու, Բարսեղ Հալաճեան, Միւսրան Կեսարեան, Խաչիկ խորասանճեան, Ապուլլահ Փէրօք, Օսեան Խաչիկ, Տոքթ. Մանիք, Գրիգոր Փափազեան, Աղեքսանդր Փանոսեան, Կարապետ Իւթիւճեան, Հարէնց Նշան, Եղուարդ Գարաթեօօր, Տոքթ. խորասանճեան եւ իր զաւակը, Գոյոյեան Աւետիս, Տոքթ. Զարգար, Տոքթ. Վահրամ եւ Գէորգ էֆ. Թորոքեան, Տոքթ. Նազալ-ճեան (հանգուցեալի փեսան), Արթիւր Ջրաճեան, Արիկ Ունճեան, Մուսլիս պէյ Փիլիպի, Կիւլլապեան Միւրայէլ, Բարսեղ Սիմապօլիսեան, Հրանտ Ապրո պէյ, Մաքսուտ Սեպուր պէյ, Մատթէոսեան Յակոբ, Տոքթ. Պապեան, Թաշճեան Սարգիս, Մուսիլեան Յարութիւն, Գարեթեմեան Գարեթի, Բոպէր Եղաճեան, եւ այլն:

Ներկայ էին նաեւ՝

Պէշիկթաշի, Մաքրիզիլի, Գառնիկ-Հայի, Բերայի, Ֆերիզիլի Թաղ. Խորհրդը կողմէ պատուիրակներ, ազգ. եւ օտար մամուլի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Տատեանց տալ խախտաւորները: Դպրոցական աշակերտներու խումբեր եկած էին Գառնի փաշայի ու Բերայի վարժարաններէն, ինչպէս նաեւ Ս. Յարապ ուրանոցէն, առաջնորդութեամբ իրենց ուսուցիչներուն:

Հետաքրքիրներու ստուար բազմութիւն մը լեցուցած էր եկեղեցիին բակն ու տրամադրելի վայրերը: Բարապետներ զրկուած, կառավարական բոլոր պաշտօնատեղերէն ու Պատրիարքարանէն, երկու կարգի վրայ շարուած էին եկեղեցիին զուռնէն սկսելով: Կանանց փոքր տունը ամբողջովն լեցուած էր: Դուռը, փողոցն ալ անցնելու տեղ չէր մնացած հիտաքրքիրներու հոծ բազմութեան պատճառաւ:

ԳԱԳԱՂԸ

Դազաղը զետեղուած էր եկեղեցիին միջտեղը, կաղնիփայտէ գեղեցիկ դազաղ մը, զորուած պարծ մանաքեօի մը վրայ, ծածկուած պակններով, ու չըլապատուած Երրորդութեան եկեղեցւոյն խոշոր մոմերով:

ՊԱՍԿՆԵՐԸ

Դազաղին շուրջը զրուած էին պսակները, զրկուած հանգուցեալներ երկու զատակներուն, Գարեթի էֆ. Նորատեմեանի, Տոքթ. խորասանճեանի, Յակոբեանի, Իսկէնտէր շօնի էֆ. Իսպա-տանեան էֆ. Միտրոպիտան վարժարանի անդամներէն ինչպէս նաեւ Մաքրիզիլի, Պէշիկթաշի, Բերայի եւ Գառնիլիպայի Թաղական Խորհրդոց կողմէ:

ԱՐԱՐԻՈՐԻԹԻՆԸ

Մեռելական տարադրութիւնը սկսաւ Ս. Պատրիարքին Հայ Մերովիքը կարգադարձ Վահան վարդապետ Յակոբեան, ուրկէ ետքը Աւետարան կարգադարձ Գ. Գէորգ եպիսկ. Երեւանի Երեւոյցութիւնները ներգաղանիկօրէն կատարեցին բազմաթիւ զպիւրներ, որոնց զուրկը կը զրտնուէին երկու դպրապետներ:

Ներք բարապետներ, զապին երկու կողմը կեցած, Թաշճի քարճեան վրայ կը կրէին հանգուցեալին Օսմանեան եւ օտար պատուանշանները:

ԳԱՄԱՐԱՆԱԿԱՆԸ

Արարողութեանց աւարտումէն ետքը, Ս. Պատրիարքը, չըլապատուած երկու վարդապետներէ եւ տանի օժտ քահանաներէ, ըստ եղանակի, զամբանակները խօսեցու:

Ն. Սրբազնութիւնը իրեն ընտրան առաւ Աւետարանի Ալիս ամենայն ճանապարհ ըստ Փրկչին օրինակը՝ խօսքը, եւ հանգուցեալին զրուատականին անցնելու առաջ երկու տեսութիւն մը ըրաւ: հանճարի վրայ, մանրամասնաբար բա-ցատրեց անոր բոլոր վարդապետները, յանգեալ համար օտ հետեւութեան թէ հանճարեղ մարդիկը եթէ երբեք կրնան ընական ձիրքերով օժտուած ըլլալ, առանց աշխատութեան, առանց զարգացման չեն կրնար մշակել այդ ընական ձիրքերը, ու ընականաբար չեն կրնար հանճար մը դառնալ:

Այս տեսութեանց ետքը օրինակ ըն-րաւ հանգուցեալ փաշան. ըսաւ թէ իր զաւակ ընտանիքի մը որուն մէջ ինչա-ցութիւնը, մտադրութիւնը եւ ճարտարութիւնը կերպով մը ժառանգական է, հանգուցեալը ընականաբար օժտուած պիտի ըլլար շատ մը ընական ձիրքերով: Բայց աւելցուց, եթէ երբեք ըլլար իր անձնական աշխատութեան, եթէ երբեք յոգնած չըլլար, եթէ երբեք տքնութեան ժամեր անցուցած չըլլար՝ իր ուսմանը կատարելագործելու համար, երբեք չպի-

տի կրնար ձեռք ձգել այն դիրքն ու աստիճանները որոնք զինքը այսպէս ընդ-հանուր յարգանքի արժանացուցած են:

Ն. Սրբազնութիւնը ըսաւ նաեւ թէ հանգուցեալը բացի ընական ձիրքերէ, չըլապատուած էր նաեւ շատ նպաստաւոր պայմաններով: Իր ընտանիքին մէջ ուսման մեծ կարեւորութիւն տրուած ըլ-լալով, առաջին օրէն աշխատուած էր ան-թերի կրթութիւն մը տալ իրեն. այդ մա-տին, հանգուցեալը շատ հոգածու ինքնա-մը ընդունած էր իր մանկութեան միջոցին եւ պատանեկութեան տեսնելու ալ ոչ մէկ ջանք խնայուած էր իրեն, ոչ մէկ միջոց պակսած էր զինքը շատ բարձր զարգաց-ման մը հասցնելու համար: Բայց, յարեց, հակառակ դիրքը չըլապատող այս աղուոր պայմաններուն, հանգուցեալը կրկին չէր կրնար հանդի կարողութեան եւ հանճարի այն աստիճանին որ զինքը կը յատկանշէ այ-սօր, առանց անձնական աշխատութեան, առանց անձնական յոգնութեան ու արք-նոմներու: Իր կարողութեանց կէտը, եթէ ընական ձիրքերու կը պարտի, միւս կէտը արգասիքն է այդ աշխատութեան ու արք-նոմի կեանքին: Առանց ատոր, երբեք չպիտի կրնար վայելել այն յարգանքն ու համարումը, որոնցմով ամէն կողմէ կը չըլապատէին զինքը, որովհետեւ առանց աշխատելու երբեք չպիտի կրնար այսպիսի գեղեցիկ, այսպիսի օգտակար գործունէ-թիւն մը ունենալ:

Ն. Սրբազնութիւնը այս զննատու-մը ընելէ վերջ, յարեց թէ պէտք է յարգել այդ մարդիկը, պէտք է պատահականօր-վարաբար իր այդ արժանիքի տէր խա-րդը հանգեալ, որովհետեւ հանճարի, կա-րողութեան մարդը յարգելով, մարդ ինք-զինքը յարգած, ինքզինքը պատուած կ'ըլլալ:

Յետոյ բացատրեց հանգուցեալ փա-շային ունեցած զիրքը իր ընդհանուր գիծերուն մէջ, առանց մանրամասնութեան մտնելու: Ըսաւ թէ ինչպէս իր կարողութեան եւ աշխատութեան չնոր-հիւ, ամենախոնարհ աստիճաններէ հա-տած է շատ բարձր աստիճաններու, մինչ-դե բարձրագոյն աստիճանը, Վեզիր-թեան: Յիշատակեց անոր պաշտօնները ու մասնաւորաբար պետական խորհրդա-կանի պաշտօնը, զոր Վեհ. Սուլթանը ի-րեն յանձնած էր վստահաբար: Ըսաւ թէ ինչ ճարտարութեամբ, պաղարհուութեամբ կը վարէր այդ բարձր ու զգուարին պաշ-տօնը, չթերանալով ոչ մէկ չէ, չխօսու-լով ոչ մէկ ասթի մէջ: Այդ յատկութիւն-ներուն չնորհիւ է որ, ըսաւ, Վեհ. Սուլ-թանը անչափ համարում ունէր հանգու-ցեալին վրայ, այդ յատկութիւններուն չնորհիւ է որ հանգուցեալը արժանացած էր աստիճանի ու պատուանշաններու, ա-մէն մէկը ապացոյց իր արժանիքին ու կարողութեան: Միւսնորն նաեւ բոլոր այն օտար տեղութեանց աշխիւ, որոնց հետ Օսմ. կայսրութիւնը յարաբերութեան մէջ կը գտնուէ. նոյն համարումը ամէն տեղ, նոյն պատահականքը ու յարգանքը:

Ս. Պատրիարքը յետոյ չեւտեց այն հաւատարմութեան պարտքը զոր ամէն մարդ, պարզ անհատ կամ պաշտօնեայ, պէտք է հատուցանէ իր Վեհապետին: Հետաքրքիրութիւնը, ըսաւ, առաջինն է առաջինութեանց, եւ աւելցուց թէ հան-գուցեալ փաշան երբեք չէր թերացած իր այդ պարտականութեան մէջ, եւ թէ ամէն բանէ աւելի ի հաւատարմի ծառայու-թիւնն էր որ իր զգուարին պաշտօնին մէջ ըրած բոլոր կարգադրութիւնները ըն-դունելի դարձուց իր Օգոստ. Վեհապե-տին, եւ Անոր համարման արժանացուց ամէն կերպով:

Ս. Պատրիարքը հանգուցեալին պետա-կան կեանքը այսպէս մանրամասնելէ ու բացատրելէ ետքը, անցաւ անոր աղա-քին չըլանակի մէջ ունեցած գործունէ-թեան եւ այն համակիր ու սիրալիր վե-րաբերութեան զոր միշտ տածած է իրեն ծնունդ տուող ազգին նկատմամբ:

Ն. Սրբազնութիւնը ըսաւ թէ հան-գուցեալը, իր արժանաւոր զաւակ իր ընտանիքին, կը սերէր իր ազգն ու եկե-ղեցին եւ թէ այդ սերունդի գլխաւոր տա-ցոյցն են նախ այն մասնակցութիւնը զոր տուած է միշտ ազգ. պաշտօնական մար-միններու, եւ յետոյ այն բազմաթիւ բա-րեգործութիւնները զորս միշտ ըրած է այլ եւ այլ ազգ. հաստատութեանց: Աս-կէ բաւական առաջ, ըսաւ, միշտ օգու-կար մասնակցութիւն մը ունեցաւ Պատ-րիարքարանի գործերուն, ու եթէ երբեք իր աշխատութեանց տարապայման առա-տութեան պատճառաւ միջոց մը չկրցու-այդ մասնակցութիւնը շարունակել, բա-րեցակցութեան իր կրկին չէր պակսած իր ջրով. այդ մասին աղուոր ապացոյց մը կրնայ ըլլալ օտ պարագան, թէ ոչ մէկ առաքելութիւն հանեց վարչութեան Ա-

տոննապետ ընտրուած միջոցին, եւ գո-վելի ետեւիցով մը այդ պաշտօնին գլուխը միտց մինչեւ իր մահը: Ն. Սրբազնութիւնը այս պարագան իր օրինակ մը մասնաւոր ըրաւ. բոլոր այն մարդոց, որոնք ազգ. պաշտօնի մը յոյնութիւններէն կը խուսափին իրենց գործերուն առատութիւնը պատճառ բըռ-նելով, մինչեւ քիչ մը բարի կամեցողու-թեամբ ամէնն ալ պիտի կրնային ահա-զին օգտակարութիւն ունենալ ազգ. հաս-տատութեանց:

Ս. Պատրիարքը ըսաւ թէ, հանգուցե-ալ փաշային աշխատութիւնն ու ինքնա-բարձր պիտի մնայ, ու միշտ պիտի լի-շատակուի ազգ. չըլանակներու մէջ: «Մարդ ինչ գործի մէջ ալ ըլլայ, աւել-ցուց, պէտք չէ ընաւ մոռնալ իր ազգն ու եկեղեցին»:

Յետոյ զուրկ հանգուցեալին կրօնա-կան զգացումները, որոնք ալ, ըսաւ, նպատած են իր բարձրացման. մարդ կրնայ զորաւոր է, կրօնով կրնայ տո-կալ, ու մեծ ամէնք, յարեց, կրնանք վկայել թէ ջերմեանեղութեան ու եկե-ղեցապետութեան զմայելի օրինակ մը կրնայ հանդիսանալ հանգուցեալ փաշան: Հանճարով բարձր սիրտ մը, առանց կրօ-նական զգացումների վառուած ըլլալու չի կրնար կատարել հանգամանք մը տալ մարդուն:

Ն. Սրբազնութիւնը յետոյ անցաւ ու-րիշ տեսակետի մը: Մարդ, ըսաւ, միշտ աղուոր յատկութիւններ չէ որ կ'ունե-նայ, անթերի մարդ մը երբեք չէ ծնա-ւախարճ. թերութիւնները անչափ բնա-կան են մարդու, որչափ յատկութիւն-ները, բայց անուշտ մարդ մարդ կը տարբերին: Այն թերութիւնները զորս հանգուցեալը ունէր, ոչ մէկ արատ, ոչ մէկ չու-ք կրնան բերել իր անուան ուսմա-բարձրութեան մեծի, հոյակապ արձաններ կան, պատրաստուած զմայելի արուես-տով մը, եւ ներգաղանակ ամէն կերպով. բայց կրնայ ըլլալ որ անոնց մէկ կողմին վրայ, արուեստագետին մէկ պոստի մո-նացմամբ գտնուի թերութիւն, զորթ անը-մարիկ անհարթութիւն մը. այդ անչա-նանարթութիւնը պէտք է որ նեմացնէ արձանին բովանդակ գեղեցկութիւնն ու հոյակապ հանգամանքը: Ոչ, անուշտ Ու ճիշդ այդ պոստի, անկարելի անհար-թութեան կը նմանին Հանգուցեալին թերութիւնները, որոնք ոչ մէկ կերպով կրնան նեմացնել իր հոյակապ անձնաւո-րութիւնը, իր զմայելի հանգամանքն ու արժանիքը: Հանգուցեալը, յարեց, մեր աչքին միշտ բարձր պիտի մնայ, միշտ օ-րինակելի, միշտ հոյակապ ու անմոռանա-լի, եւ ատոր համար է ահա պարտաւոր հանդէպը, այս արարողութիւններն ու ա-ղօթքը:

Իր դամբանականը այս կերպով վեր-ջացնելէ ետք, Ս. Պատրիարքը օրհնեց Տատեան գերեզմանին ու անոր յիշա-տակը, ինչպէս իր այն նշանաւոր ու պատուաւոր անձնաւորութիւնները որոնք հասած են այդ գերեզմանին եւ մաղ-թեց որ հանգուցեալ փաշային որդին, Տիրան պէյ Տատեան, յոյնքան պատուա-րէր ու արժանաւոր զաւակ մը հանդի-սանայ իր գերեզմանին, պետութեան ու ազգին առջեւ վայելելու համար այն ընդհանուր յարգանքն ու համարումը որ ամէն կողմէ զէկել իր հայրը կ'ողջուէր:

ԹԱՔՕՐԸ

Դամբանականէն վերջ թափօր կաղ-մուցեալ եւ հետեւեալ կարգով ուղղուե-ցաւ զէկել Թաղաթիւ Ս. Յարութիւն եւ կեղեցին:

Նախ կառավարական ու ազգ. պաշ-տօնէութեանց բարապետները, յետոյ վար-ժարանի աշակերտները, որանոցի սանե-րը, պատիւները, զպիւրները, քահանաները, վարդապետները, եպիսկոպոսական դասը եւ Ս. Պատրիարքը որ մինչեւ Երրորդու-թեան եկեղեցւոյն զուրկ միայն հետեւե-ցաւ թափօրին: Իւր սպակիր թափօրին կը հետեւէր հանգուցեալին որդին, Տիրան պէյ, որ եկեղեցին ալ միեւնոյն հանգա-մանքով կեցած էր դազաղին ջրով: Յե-տոյ կուգային բոլոր ազգային եւ օտար հրաւիրեալները: Հանգուցեալին պատ-ուանշանները միշտ երեք բարապետներ կը կրէին, թափօրին առջեւէն: Ահաքին բաղնիքները մը կը հետեւէր թափօրին:

Դազաղին ծոցիկը ընտած էին Ապ-տիւլէթիւմ էֆ., Տալիլիէի կողմէ ներկա-յացուցիչ մը, Պարսկական դեսպանատան Ա. թարգմանը, Նորատեմեանեան Գարեթի էֆ., Միլիտի Խառեան եւ Տոքթ. Տաղա-ւարեան էֆէնտի:

Թափօրին հետեւողներուն մէջ կը տես-նուէին նաեւ Հազար պէյ, Նուրի պէյ, Խարիճիլի ընդհ. քարտուղար, Չէլիլիի փաշա, Կայս. Պալատին Դիւանի Ա. թարգ-ման Տալուտ էֆ. եւ Սասնէթտին պէյ:

Ս. ՅԱՐԱՐԻԹԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Ս. Յարութիւն եկեղեցւոյն մէջ մեռե-լանակ արքեպիսկոպոսութիւնը ետքը, դա-զաղը զրուցեալ առաջնակարգ մեռելա-կառքի մը մէջ եւ ուղղուցեալ Պէշիկ-թաշի Բազմաթիւ յուզարկութեան կառ-քերով հետեւեցան մեռելակառքին:

ՊԵՇԻԿԹԱՇԻ ՄԷՋ

Պէշիկթաշի Թաղ. Խորհուրդն ու վար-ժարանի ուսանողները թափօրով դիմա-ւորեցին մեռելակառքը: Դազաղը եկեղե-ցին տարուելով արարողութիւնները կա-տարուեցան: Յետոյ, դազաղը թափօրով տարուեցաւ հանգուցեալին ընակարանին առջեւ ուր աւետարան կարդացուցաւ: Աւետարան կարդացուցաւ նաեւ Յունաց եկեղեցւոյն առջեւ, որուն զանգակները, ինչպէս նաեւ մեր Ս. Աստուածածին եւ կեղեցւոյն զանգակները կը հնչե

